

Ստացուած առ ձեռն հին ու նոր ծանօթութեանց վրայէն ակնարկ մը նետելով հին ու նոր թուրքահայ առեւտրոց վրայ՝ կը տեսնենք որ 1500 թուականէն ի վեր՝ Ասիայի մերձաւոր և հեռաւոր դեհերէն հետզհետէ Կ. Պոլիս գաղթող և հաստատուող հայերուն ստուար մասը, Տաւրոսեան Քերսոնի հին գաղթականութեանց և Կ. Պոլիս բնակացած հին հայերուն հետ, տակաւ առ տակաւ բռնած էր մեծկակ տեղ մը մայրաքաղաքին միջնազգային փորձ Խնամներուն մէջ, որ հռոմէական բլեպներու շարունակութիւն մըն էին:

Կամարակապ Մեծ շուկային պեղեսպեկներէն սկսելով՝ մինչեւ Վէզիր խանի, Չուխաճի խանի, Քիւրքճի խանի, Վալիտէ Մեծ-նոր և Սիւմպիւլ խաներու մէջ ու շրջակայքը բռնած էին արհեստական ու առեւտրական կարեւոր դիրքեր հին հայ շուխաճիները, գազազները, ոսկերիչները⁽¹⁾, ակնագործները (ճէվահիրճի), թիւլպէնտճիները, եազմաճիները, շալճիները, պէզճիները, մանրավաճառ մանրիփաթուրաճիները, գալբաքճիները, սահաթճիները, թոհաֆճիները, պիւէզիկճիները, տեղացի դերձակները, հոչակաւոր քիւրքճիները, տէլլալները, երկաթավաճառներն ու չիլինկիրները:

Հայ ժողովուրդին այս գործօն միջակորեարը՝ քիչ շատ բարեկեցութեան բերումներով և տեղական խորին ծանօթութիւններով և անցուկ կենցաղագիտութեամբ օժտուած՝ կըրցած է երեք հարիւր տարիի չափ կանգուն անկարօտութեան և գործունէութեան մէջ պահել իրեն հետեւորդ Կոստանդինուպոլսեցի արհեստաւոր հասարակ ժողովուրդը, յաճախ որդի ի հօրէ ժառանգելով ճարպիկ

(1) 2. Միքայէլ Չամչեան մեծ Մխիթարեանն ալ՝ ելած է ոսկերչաց Կ. Պոլիսի շուկայէն, ուրկէ 23 տարեկան մեկնած է Ս. Ղազարի Մխիթարեան վանքն ի կրօնօւորութիւն: